

ՍԻՐԵԼԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ, ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Posted on December 3, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Վիզէն Լ. Ադդարեան, Մոնթրէալ 28 Նոյեմբեր 2022

Սիրելի դասընկերներ,

Իսկապէս սրտի մեծագոյն կսկիծով այս շաբաթավերջին ստացայ Ժիրայր Դանիելեանի մահուան գոյժը: Ձեզմէ անոնք որ Լիբանան կը բնակին, զինք պիտի ճանչնան իբրեւ ՀԲԸՄի Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան միացեալ երկրորդականի նուիրեալ տնօրէնը եւ հայերէն լեզուի մասնագետ պաշտպանը: Սակայն Ժիրայրը այդ բոլորէն եւ այդ իրականութիւնը նկարագրող բառերէն շատ ավելի վեր անձ մըն էր:

Ժիրայրը այսօր անփոխարինելի է: Եւ այս կ'ընդգծեմ: Մեր վերջին տասնամեակներու Սփիւռքի լաւագոյն մատենագետներէն էր, չըսելու համար լաւագոյնը: Բծախնդիր գիտաշխատող մը, որ երբ կը նուիրուէր ծրագրի մը, ո՛չ միայն զայն կ'ամբողջացներ, այլ զայն կ'ամբողջացներ ամենաբարձր որակով:

Ազգային իրավիճակով եւ մանաւանդ հայերէն լեզուի իրականութեամբ եւ վերապրելու յոյսերով մտահոգ եւ գերմտահոգ անձ մը եղաւ, որ տառացիօրէն քուն կը փախցներ ատոր համար: Աւելին, իր ուշադրութեան առարկան ո՛չ միայն մեր լեզուն եւ մշակոյթն էին, այլ նաեւ մեր նոր մեծցող սերունդը, մեր մամուլը, մեր ազգային կազմակերպութիւնները, մեր պետութիւնը, մեր ընկերային իրավիճակը, մեր գաղութները: Փաստօրէն մենք, որպէս հայեր, ամբողջութեամբ:


Իսկական, ողջախոհ եւ յանձնառու մտաւորական էր Ժիրայրը, որ նոյնպէս անխոնջ կերպով կ'աշխատէր զինք մտահոգող բոլոր հարցերուն համար, որպէսզի բարելաւէր իրականութիւնը, նպաստէր մեր ազգային յառաջացման եւ պայքարէր ընդդէմ միջակութիւններուն: Իր գործո՞վ եւ ո՛չ միայն իր խօսքով:

Ժիրայր Դանիելեանը այդպէս եղած էր միշտ: Մեր ազգային ճղճիմ եւ իրարամերժ իրականութեան մէջ՝ Ժիրայրը, իր հեզութեամբ եւ նաեւ իր անկեղծութեամբ եւ գիտուն ու իմաստուն միտքի պայծառութեամբ մնայուն, մեզի իրարու կպցնող այն խեժը եղաւ, որ միշտ եւ ամէն բանէ առաջ հաւատքը ունեցաւ թէ կարելի է ազգովին ստեղծել միասնականութեան ոգի մը, տեսիլք մը, որուն շուրջ կարելի է համախմբուիլ եւ աշխատիլ նուիրեալ կերպով: Իր կեանքը ամբողջ ատոր լաւագոյն օրինակն էր: Այո՛, կը ցաւէր մեր ազգային իրականութեան ի տես, բայց միշտ յուսալից էր, եւ նամանաւանդ՝ միշտ աշխատող եւ բնաւ չընկրկող:

Ժիրայր Դանիելեանը այդպէս եղած էր միշտ, դեռ իր պատանեկութենէն ի վեր եւ երիտասարդ տարիներուն ալ: Քիչերուն ծանօթ է, սակայն եթէ Սփիւռքի եւ Հայաստանի պատմութեան մէջ ազգային մեծ դեր ունեցան 1965ի Եղեռնի 50-ամեակի ոգեկոչումները, նամանաւանդ մեծաթիւ, համազգային, միացեալ եւ յստակ պահանջատիրութիւնը, ատիկա հուր մըն էր, որ բռնկեցաւ սկսելով Պէյրութէն, որուն համար գոնէ նախապէս 2-3 տարուան աշխատանք մը տարին [բուռ մը նուիրեալ հայ](#)

Երիտասարդներ: Անձեր, որոնք ակաւաւորեալ վկաներն էին անկէ քակի մը տարի առաջ տեղի ունեցած մեր ազգային եղբայրասպան ոճիրներուն, մեր շարունակուող բաժանումներուն եւ ինքնակործան քաղաքական դիրքորոշումներուն, եւ որ նոյնիսկ իրենք ալ այս կամ այն պատճառներով պիտակուած էին որոշ կողմի անդամակցութեամբ: Երիտասարդներ էին անոնք, որոնք ո՛չ միայն մերժեցին այդ պիտակումները, այլ ոգի ի բռին աշխատեցան ամէն օր, տարիներով, հաւատալով թէ իրարատեաց բաժանումը ազգակործան է եւ զայն պետք է արմատախիլ ընել մեր ամենօրեայէն: Այդ երիտասարդներու փոքր խումբին մաս կը կազմէր Ժիրայր Դանիելեանը: Եթէ Լիբանանի մէջ տեղի ունեցաւ 1965-ի 50-ամեակի պատմական ոգեկոչումը, անձերէն մէկը, որուն կը պարտինք այդ՝ Ժիրայրն էր:

Ժիրայրը նաեւ անձնական բարեկամ էր ծնողներուս, ինծի եւ քրոջս, եւ որուն հետ ունեցած խօսակցութիւններս եւ զրոյցները մեր յարկին տակ, եւ որուն նուիրուածութիւնը ի նպաստ ընտանիքիս մտաւորական ժառանգութեան պահպանման՝ անզուգական էին: Սիրով մաս կազմեց ինչպէս յետ-մահու հրատարակուած ձեռագրերու բարձրորակ հրատարակման յանձնախումբին եւ իր աշխատանքը փայլուն կերպով իրագործեց, ինչպէս միշտ:



Աւելին, տասնամեակ մը առաջ, Ժիրայրը ձեռնարկեց եւ ապա խմբագրեց ու հրատարակեց ինչպէս գրականագիտական եւ հայագիտական լաւագոյն դասախօսութիւններն ու յօդուածները, որոնցմէ շատերը նախապէս անտիպ էին, «Մատեան Բանաւոր Խօսքի» անունը կրող հատորով մը: Այդ գործը եւ [Ներկայացուցի](#) Մոնթրէալի մէջ 2012-ին, ինչպէս ծննդեան 90-ամեակին նուիրուած հանդիսութեան մը ընթացքին: Որպէս որդի, ինչպէս միտքին արգասիքը ներկայացնելու պատիւը պիտի չունենայի, եթէ Ժիրայր Դանիելեանը կատարած չըլլար այն ինչ որ ըրած էր միշտ: Սիրելի իր լեզուամշակոյթը եւ անոր անձնանուէր ծառան դառնալ ու միշտ, անշեղօրէն, անոր սպասարկել իր բոլոր կարելիութիւններով:

~~Ո՛չ միայն ես, այլ մեր ազգը ամբողջ պիտի իր կարօտը քաշէ շահ՝ ու երկարօրէն:~~

There are no comments yet.